№ 15 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 9 ԱՊՐԻԼԻ 1894 № 15

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղռան, կէս տարուանը 6 ղռան: Առանձին համարները 5 շահի: Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի, կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran. Rédaction CHAVIGH:

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիրակէ ու տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն եղանակով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շավարինի Կրթասիրաց ընկերութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Նոր-Ջուղայից. Նամակ Սալմաստից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.

ՇԱՎԱՐԻՆԻ ԿՐԹԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

—

Մեր պարսկահայերի հասարակական կեանքը կազմող մռայլ երեւոյթների մէջ կան նաեւ մի քանի փոքրիկ պայծառ կէտեր: Մեզ համար նոյնչափ մեծ ուրախութիւն է խօսել դոցա մասին, որչափ տրտմաւիթ է գրել առաջինների վերայ:

Համադանից քիչ հեռու, գտնւում է Շավարին անուն մի հայաբնակ գիւղ 60 տուն բնակիչներով: Մի խումբ այդ տեղացի հայերից, որոնք պանդխտացած են Թէհրանում, ինքնաբերաբար կազմակերպել են երեք տարուց ի վեր մի ընկերութիւն, իւրեանց գիւղի դպրոցին նպաստելու համար: Նոքա իւրեանց նպատակը առաջ են տարել այնքան լուռ, և առանց աղմուկի, որ նոյն իսկ Թէհրանի մէջ շատ քչերը կան, որ տեղեկութիւն ունին դոցա ընկերութեան մասին: Բայցի սորանից, նոքա վճռել են նպաստ հաւաքել միայն իւրեանց գիւղացիներից, և չը դիմել Թէհրանի կամ այլ տեղի հասարակութեանց, համոզուած լինելով որ ամեն մի քաղաք, Պարսկաստանում, հազիւ թէ կարողանում է բաւականանալ իւր տեղական կարիքներին: Նախ՝ վճռած են եղել մինչեւ տասը տարի ձեռք չը տալ իւրեանց հանգանակած և շահեցրած գումարին, ոչ էլ նորա տոկոսին, բայց երեք տարուայ ընթացքում նկատելով որ արդէն 200 թուման գումար են հաւաքել, և իւրեանք այնպէս են շահեցնում այդ գումարը որ տարեկան 20—24 առ հարիւր տոկոս է բերում, միւս կողմից նկատելով իւրեանց գիւղի դպրոցի անմիջական օգնութեան կարօտ լինելը, վճռել են տարեկան 30 թուման նպաստ յատկացնել նորան: Այդ յիշեալ դպրոցը արդէն ունի մի ուսուցիչ որին տարեկան 36 թ. են վճարում, և ունի մի քանի այլ ծախքեր, մինչեւ այժմ դպրոցը կառավարուած է եղել տարեկան 30 թումանով, որ թեմական Առաջնորդ Եսայի Եպիսկոպոսն ուղարկել է նոցա, չը գիտենք ինչ գումարից, և մնացորդ մի քանի թումանի ծախքերը ինքեանք, գիւղացիներն են հոգացել: Ընկերութիւնը ցարդ չէ ունեցել որոշ կազմակերպութիւն, և միայն նուիրատւութիւններից է գոյացրել իւր այդ գումարը, բայց այդ ձեռնարկող և հայրենասէր գիւղացիները այժմ միաք ունին որոշ կազմութիւն տալ իւրեանց ընկերութեան իբրև անդամակից ընդունելով միայն իւրեանց գիւղացիներին, որոնք որոշուած տուրք պէտք է վճարեն, իսկ նուէրներ կարող են ընդունել ամեն մարդուց:

Վերին խստիճանի մխիթարական մի երեւոյթ է Շավարին գիւղի բնակիչների այս նախաձեռնութիւնը: Այս և սորա նման այլ նշաններից երեւում է որ իսկապէս հնչել է պարսկահայ գիւղերի վերածնութեան ժամը: Ժամանակ է արդէն մտածել լուրջ հիմունքների վերայ դնել այդ, մեզ համար կենսական հարցը, և մանաւանդ հսկել, որ սկզբից գործը սխալ շաւղի մէջ չը դրուի: Գիւղացու աւանդապահ ոգին, որ ինքնըստինքեան սքանչելի մի յատկութիւն է, դիւրութեամբ չէ ազատւում իւր առաջին տպաւորութիւնից, և բաւական է մի սխալ քայլ գործի սկզբում, և ահա ամբողջ մի երկու սերնդի կրթութեան գործը վտանգուած կը լինի:

Մենք ուրախութեամբ շնորհաւորում ենք շավարինցիներին իւրեանց օգտակար ձեռնարկութեան, եռանդուն և անդադրում գործունէութեան համար, և թէեւ նոքա չեն դիմում օտար տեղացիների օգնութեան, յոյս ունինք որ այնուամենայնիւ թէ Պարսկաստանի և թէ Ռուսաստանի մեր հայրենակիցները օգնութեան և խրախոյսի ձեռք կը կարկառեն նոցա: Հրաւիրում ենք ռուսահայ թերթերին և մանաւանդ դպրոցական գրքերի հրատարակիչներին, որ երբ առիթը ներկայանում է ձրի լրագիրներ կամ գրքեր ուղարկելու, աչքի առաջ ունենան նաեւ փոքրիկ Շաւարինը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՋՈՒՂԱՅԻՑ

—

26 մարտի 1894

Ն. Ջուղայից ուղարկել են մեզ հրատարակելու հետեւեալը: „Շաւիղ“ շաբաթաթերթում կարդացինք, որ մեր պատուելի հնդկաբնակ հայքերը անցեալներում խնդրքով դիմել են Վեհափառ Կաթուղիկոսին, որ Նորին Օծութիւնը բարեհաճէ իւրեանց սիրելի և խիստ մեծարելի Առաջնորդ ամենապատիւ Եսայի Եպիսկոպոսին պարգեւել արքեպիսկոպոսութեան աստիճանը. մենք եւս՝ ջուղայաբնակ ազգայինք որ ի մօտոյ ճանաչում ենք յիշեալ Եսայի Հօր անգնահատելի անձնուրութեանը և վկայ ենք նորա կատարած մեծամեծ ծառայութիւններին՝ յօգուտ ազգի և եկեղեցւոյ, կամենալով ի կատար ածել մեր վաղուցուայ փափագը, այսինքն ձայնակից լինել մեր պատուելի հնդկաբնակ հայերին, ուղարկեցինք Վեհափառ Հօրը մի խնդրագիր, խնդրելով որ Նորին Օծութիւնը բարեհաճէ շնորհել մեր արժանի հովուին արքեպիսկոպոսութեան աստիճանը, նաեւ միջնորդել Մեծազօր Ռուսաց Կայսեր՝ պսակելու Ն. Սրբազնութեանը իւր պաշտօնին յարմար մի շքանշանով:

Նամակս փակած րոպէին ցաւօք սրտի լսեցի, որ մի քանի նախանձոտ և շահախնդիր անձինք, կամենալով խեղդել

մեր պատուելի Հնդկաբնակ Հայոց ձայնը, աճապարել են հեռագրով յայտնել Նորին Վեհափառութեանը իւրեանց անհիմն դժգոհութիւնը մեր ամենապատիւ Առաջնորդից. այդ է մի այդպիսի արժանաւոր հովուին շնորհակալիքը. ամօ՜թ.....՛

Ահա մեր առ Վեհափառ Հայրիկն ուղղած խնդրագրի պատճէնը.

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Մկրտչի Արժանընտիր Կաթուղիկոսի ամենայն հայոց,

Ի ժողովրդականաց լուսաւորչական հայոց Ն. Ջուղայու,

Ամենախոնարհ խնդիր.

Վեհափառ Տէր

Թէպէտ աներկբայ եմք զի ոչինչ գանխուլ են ի Վեհափառութենէ Ջերմէ արժանիք և ազգի ազգի բարեմասնութիւնք բնաւից սիրելւոյ Տ. Եսայեայ Եպիսկոպոսի և բարեխնամ առաջնորդիս մերոյ, բայց այնու ամենայնիւ մեք՝ որք ճանապազ ականատես վկայք եմք ազգասիրական գործոց, կրօնական նախանձախնդրութեան և անպարտելի տոկունութեան նորա յուսումնական ասպարիզի, ոչ կարեմք լռել ի մատուցանելոյ Ջերդ Վեհափառութեան զանկեղծ շնորհակալիս սրտից մերոց համայնից զՆորին Գերապատուութեննէ, ընդ որ հաւատամք զի բերկրեսցի և սիրտ տնզուգական Հօրդ մերոյ, գիտելով Ջեր՝ զի և ջուղայաբնակ փոքրիկ հօտ Ջեր, գիտէ երախտապէս ճանաչել զերախտիս բարերարաց և զյարգ ազգօգուտ՝ անձնանուէր հովուաց։

Յորէ անտի գալստեան գերապատիւ Առաջնորդիս մերոյ ի Ջուղայ՝ տեսանեմք զի վարչական գրութիւն ազգայնի և կրօնական գործոց թեմիս, որ գտանիւր ի խառնաշփոթ և յանկարգ վիճակի՝ կերպարանափոխեցաւ իսպառ և ընկալաւ նոր իմն ուղղութիւն դէպի լաւանդր։ Քանզի գերապատիւ Առաջնորդս մեր ջանայ և տքնի զտիւ և զգիշեր զբանաւոր հօտ իւր պահպանել ընդդէմ ազգադաւ մարդորսողաց, որք՝ որպէս այլուր՝ նոյնպէս և աստ, խոչնդոտն լինին ամենայն բարի ձեռնարկութեանց հոգևոր հովուաց, և որ արժանին է յիշատակի՝ նաև ընդդէմ շահախնդիր և ազգատեաց իսկ հայերոյ, որք խափանել ճգնին զազգօգուտ գործս և կարգադրութիւնս Նորին Սրբազան Հօր։ Բայց վերոյիշեալ արժանեաց՝ մանաւանդ մեծարի սա յաչս ժողովրդականաց այնու՝ զի գտանի անաչառ ի բանս, անկաշառ և արդարակորով ի դատաստանի, պաշտպան այրւոյն և զրկելոյն և անշահասէր բոլորովին յամենայնի, ուստի հետևապէս ունի և հակառակորդս յարուցեալ ընդդէմ իւր՝ զշահախնդիր զոմանս։ Սակայն մեք՝ որք յընթացս երկար ամաց ականատես վըկայք եմք անկարգութեանց և անախորժանցից անցելոց ի վիճակիս, և բարեբաղդ համարիմք ունիլ զայսպիսի քաջ և անձնադիր և անշահասէր հովիւ, չակնկալեմք բնաւ լաւագոյնի քան զՍա։

Վասն որոյ և մեք՝ զգածեալ խորին երախտագիտութեամբ առ այս սիրելի Հովիւ մեր և Հայր, այսու խոնարհ յայտարարութեամբ մերով, ոչ միայն ծանուցանեմք զշնորհակալիս սրտից մերոց, այլ և համարձակիմք արկանել յոտս փառապանծ գահիդ, զամենախոնարհ խնդիր մեր, և հայցեմք ի Ջէնջ պարգևել բարեխնամ Առաջնորդիս մերում զաստիճան արքեպիսկոպոսութեան և բարեհաճել միջնորդել առաջի Տիեզերակալ Կայսեր Ռուսաց պսակել զՍա շքանշանիւ, որք արդարև պարծանք են մեզ համայնից և առաւել դիւրութիւն տայցեն հօտասէր և սիրելի Հովուիս մերում կըրկնակի քաջալերութեամբ և եռանդեամբ գործել յեկեղեցական և ի կրթական ասպարիզի, և լցուցանել կատարելապէս զիղձ և զփափագ փոքու հօտին Քրիստոսի, որ յամենայն ժամ խոկայ հաւատարիմ մընալ սրբոյ աթոռոյն Էջմիածնի և հաղորդ ազգային փառաց և պարծանաց, ընդ որս կամք և մնամք՝ հայցելով ի պարգևատուէն բարեաց երկար և փառաւոր կեանս Հօրդ Բնաւից Հայոց։

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ

10 մարտի 1894

Այն նշանաւոր խնդիրներից մէկը, որը իւր խիստ կարևորութեամբ անմիջապէս ուսումնասիրողի աչքին է ներկայանում Սալմաստի և ամբողջ Ատրպատականի մէջ՝ կրթական գործն է, որին վերջին ժամանակներս հայոց մամուլը շատ էջեր նուիրեց։ Նախ քան մեր կարծիքը յայտնելը այդ խնդրի մասին, հարկաւոր ենք համարում մի թռուցիկ հայեացք ձգել Սալմաստի հայ ժողովրդի, դէպի կրթական գործն ու հայ մանուկների կրթութիւն և ուսումն մատակարարող ֆակտորներն ունեցած հասկացողութեան, հայեացքների վերայ։

Դպրոց ասուած բանը սալմաստեցու աչքում նշանակում է ոչ թէ մի այնպիսի հիմնարկութիւն, ուր մանուկները հաւա ւում են բարոյական մտաւորական զարգացումն ու կրթութիւն ստանալու, այլ, նրանց կարծիքով, դպրոցը պէտք է ծառայէ երկու նպատակի, այն է որ մանուկները հաւաքուելով այդ շէնքի մէջ, իրանց ծնողներին ազատեն այն բոլոր գլխացաւից որ երեխայական հասակի շարժասիրութիւնը տալիս է նորանց բընաւորութեան. երկրորդ, որ այնտեղ սովորեն „Խոնարհեցոյ“ „Ապրեցոյ“ և ուրիշ փոխեր ասել, այս է այն աշխարհահայեցողութիւնը և սալմաստեցի հայի տարիների ընթացքում կազմած իդէալը կրթական հաստատութիւնների մասին. իհարկէ մեր խօսքն ընդհանրութեան մասին է, որովհետև վերջին տարիներում արդէն սկսել է տեղական նըրածիլ երիտասարդութեան մէջ մի թոյլ շարժումն, մաքառումն տիրապետող հին, փտած րէժիմի դէմ, որը, նայելով երիտասարդութեան ցոյց տուած եռանդին ու կորովին, յուսալի ապագայ է խոստանում։

Սալմաստեցին հալածելով նոր իդէալներով, նոր գաղափարներով տոգորված, ուսումնական գործիչներին, դրանց տեղը տալիս է մութանկիւններից ինքնաբոյս, Աղբակի և Տաճկահայաստանի վանքերից եկած բախտախնդիր տիրացուներին, որոնց ուսման սա մանը Նարեկից և սաղմոսից չէ անցնում։ Սալմաստի հայ գիւղերում մինչև այսօր դեռ գտնւում են տասնեակ այդպիսի վանքական փիլիսոփաներ, որոնք իրանց զարմանալի ճկուն, սողոքաքարշ. բնաւորութեամբ, մի քանի ամսուայ ընթացքում կարողանում են բազմաթիւ պաշտպաններ գտնել և սոցա պաշտպանութեան ներքոյ սկսել իրանց շահատակութիւնները։ Իրանց ապագան ապահովելու դիտաւորութեամբ, դրանցից ոմանք ամուսնացել են այստեղի գիւղերում, տըգէտ ժողովրդից կորզած դրամներով. բընակութեան համար կալուածք են գնել և հանգիստ ապրում են։ Իսկ Սալմաստի ժողովուրդը սուրբի տեղ պաշտում է այդպիսիներին։ Ինչ ասել կուզէ, որ այդ ինքնակոչ ուսուցիչների իշխանութեան ներքոյ, նոցա դպրոցներում տիրապետող իմաստակութեան շնորհիւ, հարիւրաւոր օժտուած և ուշիմ երեխաներ մի քանի տարուայ ընթացքում ներկայանում են մի մի տխմարներ։ Սակաւ բացառութեամբ, Սալմաստի մանուկ սերունդը, ուսման մէջ զարմանալի ընդունակութիւն է ցոյց տալիս, որին օգնում են երկրի բարեխառն կլիման, առողջարար ջուրը և ուրիշ պայմաններ, որոնցից զուրկ է լինում ընդհանրապէս քաղաք-

ներում ծնուած ու սնուած երեխան։ Տասնեակ և աւելի տարիներով խեղճ աշակերտը յանձնում է այդ խալիֆայական դպրոցները, բայց ընթացքն աւարտելուց ՀՀ յետոյ երբ նա դպրոցից հեռանում է, նրա զարգացումն ու գիտութեան պաշարը կազմում են եկեղեցական մի քանի փոխեր թուղթակի նման անգիր սերտած և անտանելի տառասխալներով, ադճատած լեզուով գրել կարդալ և տգէտ ծնողքն ուրախանում, „աշխարհքով մէկ են լինում“, որ իրանց որդին 10—15 տարուց յետոյ եկեղեցում փոխ է ասում...։ Երջանիկ ծնողներ։

Ուրախալի է տեսնել, որ վերջին ժամանակներում կրթութեան, ուսման գործի կերպարանափոխութեան, զգալի անհրաժեշտութիւնը ըմբռնելով մի քանի հայաբնակ գիւղերի հեղինակութիւն ունեցող անձինք երբեմնակի մի քանի բոպէներ նուիրում են նրան։ Մենք սիրում ենք լուսալ, որ Սալմաստում կրթական մէջ կարևոր և անյապաղ բարեփոխումներ մացնելու գործին դլուխ կը կանգնեն Ղալասարի և Փայաջուկի մեծապատիւ վաճառականները, որպիսիք են պ. Արզումանեանցները, պ. Բուդաղ և այլ յարգելի անձինք, որոնք տարիների ընթացքում իրանց ամեն մի հանրօգուտ գործում ցոյց տուած առատաձեռն պատրաստականութեամբ արդէնմեզ իրաւունք են տալիս յուսալու, որ այս գործում էլ գլխաւոր նախաձեռնողներ կը հանդիսանան։ Ի հարկէ սոցա գործունէութեան յաջողապէս կատարուիլը կարօտ է թեմական սրբազանի աջակցութեան։ Ցաւալի է ասել, որ հոգևոր իշխանութիւնը ոչ մի արժանաւոր ներկայացուցիչ չունի Սալմաստում, խօսքս քահանաների մասին է։ Մի առ մի շրջեցէք Սալմաստի գիւղերում և դուք կը համոզուիք այդ դառն իրողութեան մէջ։ Սալմաստի քահանան իւր պաշտօնն այսպէս է սահմանաւորում, “սլատարագ անել, և հարսանեաց, մկրտութեան, թաղման և տնօրհնեաց ծէսերը կատարել և աջահամբոյր ստանալ“, ահա ձեզ սալմաստեցի քահանայի խիստ տնձուկ հայեացքը իւր կոչման վերայ։ Նա փոխանակ աշխատելու իւր ժողովրդի լուսաւորութեան և բարօրութեան գործին օգնողներին դէմ ընկած արդելքները վերացնելու, ինքն էլ իւր կողմից ծածկապէս հարուածում է նրանց։

Երկար կանգ առնել այս խնդրի վերայ, աւելորդ ենք համարում, քանի որ այդպիսի երևոյթների անպակաս լինելը մեր կեանքում, քաջայայտ է արդէն։ Շատ ու շատ ակնկալութիւններ ունինք ներկայ ս. Առաջնորդից թէ դպրոցների, թէ եկեղեցիների, թէ քահանաների և թէ այլ հարցերի բարեյաջող լուծման մասին։

Մենք մի ուրիշ առթիւ կը ներկայացնենք մեր համեստ կարծիքն այս հարցերի, այն է՝ դպրոցական և քահանայական գործի մասին Սալմաստում, որքան մեզ յաջողուել է մի քանի տարուայ ընթացքում ուսումնասիրել։ Հարցերի փափկութիւնն ու յաջողութեան պայմանը պահանջում է մանրազնին խնամոտ ուսումնասիրութիւն, տեղական ժողովրդի տեսական և հասարակական, նոյն իսկ առանձին առանձին գիւղերի մասնաւոր կեանքի, որովհետև իւրաքանչիւր գիւղի բնակիչները զանազան հակումներ և ձգտումներ են ցոյց տալիս, որոնք բոլորովին տարբեր են միւս գիւղացիներից։

Ղ. Դ.

ՆԵՐԿԻՆ ԼՈՒՐԵՐ

Այն օրերս Թէհրան է հասել յայտնի Ամերիկացի միստր Լէնզ, որ մեկնելով Նիւ-Եօրքից վճռել է աշխարհի շրջանն անել հեծելանուի վերայ։ Մեր թղթակիցներից մէկը որ տեսակցութիւն է ունեցել նորա հետ, ձեռք է բերել հետեւեալ տեղեկութիւնները։

Միստր Լէնզ՝ մեկնել է Նիւ-Եորկից 22 ամիս սորանից առաջ, և հեծելանուով ճանապարհորդելով մինչ՝ Սան-Ֆրանսիսկո, այնտեղից նաւ է նստել մինչև Ճապոն, և անցնելով այդ երկրի միջով, միշտ իւր վէլոսիպէդի վերայ, շոգենաւ է նստել և հասել Չինաստան, ուր գրեթէ միշտ հետևելով հեռագրական գծին՝ հասել է Բիրմանիական սահմանագլուխը։ Չինաստանում միստր Լէնզը շատ դժուարութեանց և չարչարանքների է հանդիպել։ Այդ երկրում իւր ճանապարհորդած 900 փարսախից (2800 միլ) նա 600 փարսախ ոտքով է գնացել, այն էլ համարեա միշտ սեպացեալ ժայռերի վերայ և կիրճերի միջով։ Բիրմանիական սահմանագլխից նա ճանապարհորդել է մինչև Ռանգուն, և այնտեղից նաւ է նստել մինչև Կալկաթա, որովհետև անկարելի էր ցամաքով անցնել Ռանգունից Կալկաթա, ամբողջ երկիրը հեղեղուած լինելով, և եթէ ուզէր անպատճառ ցամաքով անց կենալ, պարտաւոր էր մի քանի ամիս մնալ։ Կալկաթայից նա անցել է Քշրաչի, Քշրաչիից Պէլուջիստանի միջով մինչև Բէնդէր-Աբբաս։ Պէլուջիստանի մէջ նա պարտաւորուել է ուղտեր վարձել, ուտելիք և վերմակ ելալն տանելու համար, որովհետև 22 օրից 16-ը նա անապատի մէջ է անցկացրել։ Բէնդէր-Աբբասից անցել է Շիրազ, Շիրազից Սպահանի ճանապարհով 15 օրուայ մէջ նա եկել է Թէհրան, որից երկու օր Սպահան է մնացել և կէս օր Դէհբիդ, ցերեկը ճանապարհորդելով և գիշերը հանգստանալով։ Այստեղից նա գնալու է Դավրէժ, Էրզրում, Սիվազ, Կ. Պոլիս։ Յոյս ունի 8 օրուայ մէջ հասնել Դավրէժ, և 1 ամսուայ մէջ Կ. Պոլիս։ Այնտեղից միտք ունի անցնել, Բալկանեան թերակղզուց, Աւստրիա և Գերմանիա, յետոյ իջնել մինչև Շուէյցարիա, Իտալիա, յետոյ Ֆրանսիա, Անգլիա, և շոգենաւով վերադառնալ դէպի Նիւ-Եորկ, և յոյս ունի իւր ճանապարհորդութիւնը վերջացնել 28 ամսուայ ընթացքում։ Միստր Լէնզ իւր հետ ունի լուսանկարչական գործիք, պատկերներ հանելու համար։ Նա մի Ամերիկական „Outing“ ամսաթերթի թղթակիցն է։

—

Ն. Զուղայու մեր թղթակիցը հաղորդում է որ, մարտի 26-ին Երից մանկանց տօնի օրն՝ ըստ սովորութեան՝ Ն. Զուղայու ս. Կատարինէ օրիորդաց դպրոցում կատարուեցաւ նոյն դպրոցի հիմնադիր հանգուցեալ Մանուկ Յորդանանեանի լիշատակին նուիրուած փառաւոր հանդէսը։ Կուսանաց վանքում պատարագ էր. դպրոցի չափահաս օրիորդաց խումբն՝ քաղաքներդաշնակութեամբ երգելով՝ դպրութիւն էր անում, ղեկավարութեամբ նրանց ձայնագրագէտ ուսուցիչ պ. Յովսէփ Ղազարեանի։ Ներկայ էին դպրոցի կառավարիչները, բոլոր աշակերտուհիները և մեծ բազմութիւն իգական սեռի։ Պատարագից յետոյ կատարուեցաւ հոգեհանգիստ, և ապա գընացքը դիմեց դէպի օրիորդաց դպրոցը։ Այնտեղ կարդացուեցաւ մի գեղեցիկ ճառ որի մէջ գլխաւորապէս արտայայտուեցան բարելիշատակ հիմնադրի բարի գործի նշանակութիւնը և նորա արգիւնաւէտ հետևանքը։ Ի վերջոյ՝ դպրոցի կրօնուսոյց արժանապատիւ հայր տէր Մանուէլը օրուան պատշաճաւոր մի առանձնախօսութիւն արաւ, աշակերտուհիները երգեցին սրտաշարժ երգեր և հանդէսը փակուեցաւ մի սպահպանիչով։ Կառավարիչներն և տիկինները պատուեցան

թէլով և Հանդիսականք ցրուեցան, տանելով իրանց հետ հանդիսի քաղցը տրպաւորութիւնը։

—

Երեքշաբթի օր տեղի ունեցաւ տարեկան մեծ մարշաւը, Դոնշան-Եէփէի դաշտավայրում. Նորին Կայսերական Վեհափառութիւնը արդէն մի քանի օրից իրեր գտնուում էր նոյն դղեակի մէջ։ Կէս օրից քիչ անցած Ենանովի առաջին հարուածը յայտնեց որ Նորին Վեհափառութիւնը դուրս եկաւ իւր ապարանքից դէպի մարշաւի տեղը ուղևորուելու։ Մի քառորդ յետոյ հասաւ Շահը, միւս վերայ նրատած, պալատականների սաստար շքախմբով, և ի մոյն ազգային մարշի, արագ քայլերով բարձրացաւ բլրակի վերայ դեռևս դրուած իւր վրանը։ Անմիջապէս քիսրջաւը սկսաւ։ Առաջին մեքենան կանգնում էր, ինչպէս յայտնի է, վից շրջանի մէջ (երկու ֆարասախ) և այդ վից շրջանը, մրցող ձիերը կատարեցին 19 բոպէի մէջ, ուրեմն 9 և կէս բոպէում մի ֆարասախ. վերջին չորեքնը անասելի ճիգերով անցան 2½ կէս բոպէ։ Ա. մրցանակը ստացաւ Նորին Վեհափառութեան սեփական ձիերից մէկը, սպիտակ գոյնով, որ բոլոր 6 շրջանի ընթացքում հաղթ էր եղել իւր մրցակիցներին. իսկ բ. մրցանակը Նասրդդի-բաշու ծանօթ կարմրագոյնը, որ այնքան անգամներ մրցանակ է շահել։ Գ. մրցանակը կայանում էր 5 շրջանի մէջ. (1 և երկու ֆարասախ) որ ձիերը անցան 16 բոպէի մէջ. Դ. մրցանակը շահեց Սար-քէշ'էշ-բաշու սրանչելի կարմրագոյնը որ նմանապէս անցրին հետաւորութիւն դրաւ իւր եւ իւր մրցակիցների մէջ սկզբից մինչև վերջ։ Միւս մրցանակները կը հրատարակենք երբ որ դուրս գայ պաշտօնական ցուցակը։ Ձիարշաւից յետոյ կատարուեցաւ մի շքեղ դէֆիլէ մայրաքաղաքում մնացող զօրքից։

—

Դաղստանից մեզ հասել մի հին նամակ Հայոց դարձեալ նարանի դարձի մասին, բոլորը միմիանց հակադիր բովանդակութեամբ։ Մենք չենք կարող տալ այդմանից ոչ մէկը, որովհետև տպելով մէկը՝ անարդար կը լինէր չը տպել միւսները. իսկ տպել բոլորը մենք չենք կարող տեղի սղութեան և հարցի անձնական կողմերը ստանալու սնոտիապաշտութեան։ Մենք խորհուրդ ենք տալիս այդ պարոններին թող դեռ անմոռանան սերմերը հին սկզբում, եւ միանգամայն լուրջ կերպով մտածեն ուսումնարանի կանոնաւորման մասին։ Եւ ասել՝ քան ամեն ինչ մենք յիշեցնում ենք մեր Ղանձրեի հայրենակիցներին, որ հասարակական գործերը կարելի է վարել փոխադարձ ջղջղութեամբ միայն, եւ հէնց դորա համար է մեծամասնութեան պէտքը։

—

Ռաշտի մեր թղթակիցը հաղորդում է հետևեալը. բժիշկ մանկաբարձ Կուզրիցկին, Թէհրան յաջողութիւն չը դտնելով, Ռաշտում գալ է մի լայնածաւալ աստարէզ. լինելով մայնակը քաղաքիս մէջ, ըստ իւր կոմերցիոնութեան կողմանից, մի թեթև ջերմ ու տենդ ունեցողը, 7—8 տասնեակ թուանները վճարելուց յետոյ, չէ կարողանում ազատուել դորա ցաւերից։ Ինքնակոչ բժիշկը, փոխանակ առողջացնելու ունի ծանրացնում է հիւանդին։ Ցանկալի կը լինէր, որ անտեղեակները չը խաբուէին այդ բժշկի կեղծիքներից եւ խոյս տային նորա մօտ գնալուց։

—

Նոյն տեղից հաղորդում են հետևեալը։ Սաքաֆէի գնկարդութիւն է տիրում տեղւոյն փոստատանը։ Սուրհանդակը հասնելուց 6—7 ժամ յետոյ են բարեհաճում, փոստը բանալ և ցրուել։ Մարդկանց հետ վարուում են կոպիտ կերպով, նեղացնում են խեղճերին աւելորդ փողեր առնելով, և ոչ ոք ձայն չէ հանում, ցանկալի էր, որ փոստայի գլխաւոր վարչութիւնը, անշահասէր մի քննիչ ուղարկէր, գործերը կարգի դնելու համար։

—

Մեզ հաղորդում են Ռաշտից որ, փետրուարի 24-ին, այստեղ տղայոց դրպրոցի սրահում, կայացաւ ս. Վարդանանց հանդէսը, կային մեծ թուով կանայք. նորուս աշակերտները, կարդում էին ճառեր և արտասանում էին ոտանաւորներ։ Սակայն պէտք է նկատել, որ դերձակները այդ օրը, իրանց խանութները փակել էին, իսկ մեծապատիւ վաճառականները, իրանց մի քանի թուման օգտի համար, ոչ թէ խանութներն էին փակել, այլ չէին մասնակցել անգամ։ Նոյն օրը երեկոյեան, նոյն տեղը ներկայացրին, Վարդանանց պատերազմ ողբերգութիւնը, սրահը լիքն էր հանդիսականներով, կային Ռուսաց հիւպատոսը, նրա օգնականը, և մի քանի պարսիկներ։ Անտրաքտների ժամանակ, նուագում էր պարսից զինուորական երաժշտական խումբը։ Ռուսաց հիւպատոսը այնքանի օրերս մեկնեց Ռաշտից, դէպի Պետերբուրգ։ Կեանքը դժուարացել է այստեղ. կենսական մթերքը չափազանց թանկ են։

—

Նոր-Զուղայի հասարակութեան կողմից Վեհափառ Կաթուղիկոսին ուղղուած ադերսագրի հետևեալ մասը մոռացուած է տպուի։ (Զերդ Վեհափառութեան ամենախոնարհ որդիք և ծառայք. 300 ստորագրութիւնք։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լոնդոնից մարտի 22-ին հեռագրում են հետևեալը. Աւստրո-Ռուսական դաշնագիրը իր գոյութեամբ գլխաւորապէս պարտական է Զարի անձնական միջամտութեանը. դաշնագիրը նկատւում է իբրև մի նշանաւոր քայլ Աւստրիայի և Ռուսաստանի մերձեցման մէջ։ Ասում է որ երեք կայսերութեանց Ռուսաստանի, Գերմանիայի, և Աւստրիայի միջև կայացած վաճառականական համաձայնութիւնը տեղի կը տայ խաղաղական հակումների արով վերջ կը դրուի պատերազմական պատրաստութիւններին։ Գերմանիան և Աւստրիան աշխատում են քաջալերել Ֆրանսայի և Իտալիայի մէջ եղած բարեկամական յարաբերութիւնները։

—Փարիզից մարտի 23-ին հեռագրում են որ, անիշխանականների մի նոր սոսկալի գործութիւն տեղի ունեցաւ այստեղ։ Դուքը դրուած էր մի ծակամանի մէջ Ֆոյստի հիւրանոցում սենատի լանգիմանի։ Պայթիւնը սարսափելի էր. երեք հոգի վտանգաւոր կերպով վիրաւորուեցան, և ստացուածքի մեծ վնաս տեղի ունեցաւ մերձակայքում։ Երկու հոգի կասկածաւոր մարդկանցից ձերբակալուած են։ Առողջապահական դաշնագիրը ստորագրուած է։

—Լոնդոնից հաղորդում են որ, մարտի 24-ին Շանգիի մէջ մի մեծ հրկիզութիւն է տեղի ունեցած։ Քաղաքի բնիկների թաղում 1000 տան այրուած են։ Հումբերտ թագաւորը և Վիլհելմ կայսրը մի տեսակցութիւն կունենան Վենետիկում, գացող շաբաթ օր։

—Նոյն տեղից հաղորդում են որ, մարտի 27-ին Վիլհելմ կայսրը երեկ հասաւ Վենետիկ։ Ջերմ ընդունելութիւն գտաւ Հումբերտ թագաւորի և ժողովուրդի կողմից։ Գիշերը մեծ ընթրիք տրուեցաւ ի պատիւ Ն. Կայսերական Վեհափառութեան, և լուսավառութիւն եղան ամբողջ քաղաքում։

—Լոնդոնից մարտի 28-ին հեռագրում են որ, Փարթուգալական ռազմանաւերը մեկնած են Ռիո-Զանէյրոյից դէպի Եւրոպա բերելով ռազմիրայ Դեզամալին և ուրիշ ապստամբներին։ Զոյն կայ թէ ապստամբներէ զօրքերը գրաւած են Ռիո Գրանդէ քաղաքը, բայց բոլոր հեռագրական տեղեկութիւնները արգիլուած են այնտեղից։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնդոն, 1.13 ապրիլի։ Հայանքներ ժողովում երեկ գիշեր, նաւատորմիկան նախահաշիւը մէջ բերուեցաւ, և ընդունուեցաւ քուէ արկել ի նպաստ նոր ռազմանաւեր կառուցման։ Սրբ Շերտվորթ ներկայացնելով նախահաշիւն ասաց որ կառավարութեան նախագիծը ծովային ոյժի համար կազմուած է այն անձնց ձեռքով, որ նորա խորհրդատուներն են ամեն ծովային ռազմական խնդիրներում, և թէ կառավարութեան նպատակն է Անգլիական նաւատորմը հաւասար դարձնել որ և է Եւրոպական երկու պետութեանց ծովային միացած ոյժերին։

Խմբագիր-Հրատարակիչ՝ Անդրէաս Քէչէճեանց։